բերդի շուրջ. և մոտ էր բերդի գրավումը: Նույնը կամենում էին անել Բաղեշում, Մուշում[25], Խութում[26], Սասունում[27] և սրանց բոլոր սահմաններում: Այս լսելով Զաքարիա կաթողիկոսը գնաց աշխարհակալ թագավոր Ջհանշահի և թագուհի Բեկում խաթունի մոտ, հաշտեցրեց և ինքնակալի բարկությունը իջեցրեց, իսկ ինքը գնաց իր տեղը՝ հրաշափառ աթոռ Սուրբ էջմիածին:

Բայց մեր պատմությունը կաթողիկոսի մասին չէր, այլ վերաբերում էր Ջհանշահին, ինչպես որ խոստացանք սկսել. մինչև այստեղ հազիվ կարողացանք նրա մասին (բան) գտնել: Այսուհետև ինչ որ գտնեմ, կարգով այն կշարադրեմ մինչև մեր ժամանակը:

ԳԼՈՒԽ Ե
ՅԱՂՈՒԲԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Քանի դեռ կենդանի էր Ջհանշահը, ուներ Հասան Ալի անունով մի որդի: Սա գոռոզ, անզգամ, լիրբ, կողոպտիչ և հափշտակող մեկն էր. սրան չարության պատճառով հայրը չէր սիրում: Նա ելած ինքգլուխ շրջում էր Արարատյան երկրում՝ այստեղ-այնտեղ, իբրև թափառական: Երբ լսեց, թե իր հայրը գնաց Շիրազ[28] և Քերման[29], Հասան Ալին կամեցավ բռնել կաթողիկոսին: Նա իմանալով փախավ, մտավ Աղթամար կղզին, ինչպես որ պատմում է Առաքել պատմագիրը:

Ջհանշահը եկավ Թավրիզ և իմացավ իր որդու չար արարմունքը, մտածեց. «Սա չի կարող թագավորությունը կառավարել իր ամբարտավանության պատճառով»: Իր մոտ կանչեց իր Յաղուբ թոռին և նրան ասաց. «Որդյա՛կ, քո հայրը իր ամբարտավանության պատճառով զրկվեց թագավորությունից (թագավորությունը կառավարելու իրավունքից): Բայց դու արժանի՛ եղար, դրա համար արի ու քա՛ջ եղիր իշխանության և մարդաշահության մեջ, պատրաստ եղիր չզրկելու հնազանդվածներին*, իսկ քո հորը թույլ չտաս արև տեսնի, այլ կբանտարկես նրան, մինչև մեռնի, և դու քո կյանքը անցկացրու երկրի վրա թագավորելով: Իսկ ե՛ս, քանի կենդանի եմ, պահիր ինձ, երբ կմեռնեմ, ինձ թաղիր, իսկ քո տատին՝ Բեկում խաթունին, իբրև քո մորը, պատվիր: Ինչպես ինձ համար անում ես, այնպես էլ արա նրա համար»: Այս ասաց և իր գլխից արքունական թագը հանեց դրեց նրա գլխին ու երկրպագեց նրան: Իսկ Հասան Ալին երբ լսեց իր հոր պատվիրանը իր որդուն, անհետացավ, կորավ, ոչ ոք չիմացավ, թե ինչ եղավ: Տարածեցին, թե գնացել է օսմանցիների երկիրը և դարձել է ավազակների ընկեր, որոնք ջալալիներն[30] են: Իսկ Յաղուբը թագավորելով ամբողջ Պարսկաստանի վրա՝ պահպանում էր պապի պատվիրանը, հանդարտ ու խաղաղ կյանքով կառավարում էր թագավորությունը:

Նա մի քույր ուներ, որին կին տվեց Շեյխ Հայդարին՝ Արտաբիլի Շեյխսաֆու որդուն: Սրանք՝ ամուսին և կին, մտադրվեցին սպանել Յաղուբ թագավորին և իրենք լինեն թագավոր, քանզի Յաղուբը ոչ տղա ուներ, ոչ՝ աղջիկ, որպեսզի թագավորությունը ժառանգորդ ունենա: Եվ մի օր թագավորին հանուն սիրո ճաշի հրավիրեցին և մահաղեղ խառնելով կերակուրին՝ տվին նրան, երբ կերավ, իմացավ ու հրամայեց իր քրոջը և փեսային բռնի ուտեցնել, և այդպես երեքն էլ մեռան միասին՝ Յաղուբը, քույրը, փեսան: Այսպես վերացան նրանք: Բայց Յաղուբի ոչ թագավորության թվականը գտա և ոչ մահվան:

ԳԼՈՒԽ Զ
ԻՍՄԱՅԻԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ասացինք, Յաղուբի մահը թունավորմամբ եղավ, սակայն մինչդեռ հոգուտետ էր, հրամայեց Հայդարի ողջ ազգատոհմը բնաջնջել, որ և արին: Հայդարը Իսմայիլ անունով մի որդի ուներ, որ ծնվել էր Յաղուբի քրոջից, նրան փախցրին Աղթամար կղզին: Խռովություն ու մեծ աղմուկ եղավ պարսից զորքի մեջ թագավորության վերանալու հետևանքով: Այս պատճառով ոչ թագավորական տոհմից ոմն Ալվանդ, որ աննշան տոհմից էր, տեսնելով ազգի անտերությունը, իր հետ միաբանեց իշխաններից ոմանց և ինքնագլուխ թագավոր եղավ: Իշխանները դժգոհ լինելով՝ Աղթամար

* Բնագրում՝ *Պատրաստ լեր ի զրկելոյ զհնազանդեալսն*, ֆրանսերեն հրատարակության թարգմանիչ Բրոսեն այս արտահայտությունը թարգմանել է. *«Պատրաստ եղիր զրկելու անհնազանդներին»*. ռուսերեն այն թարգմանվել է - «*ՏՐՑԱՐԱչՈՂՐ՛ ՍՌՔՈՑՖ ՏՏՍՏՐՎօւ*»՝*«պատրաստ եղիր:* Մենք կարծում ենք *ի զրկելոյ* պետք է լինի *ի չզրկելոյ* կամ *չզրկելոյ*: